2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2025 ԹՎԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե
www.cadastre.am

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվել է նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վերլուծություն, մասնավորապես կատարվել է Երևան քաղաքի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների գնային և քանակական վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է ըստ վարչական շրջանների, որպեսզի նկատելի լինեն առավել ակտիվ և պասիվ վարչական շրջանները: Ստորև ներկայացնում ենք 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված վերլուծության արդյունքները:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում իրականացվել է նորակառույց (մինչև 9 տարի մաշվածություն ունեցող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 4,088 գործարք, վերոնշյալ գործաքներից 3,682 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ում ներկայացված է Երևան քաղաքում նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործաքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 1



Գծապատկեր 2-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների (բացառությամբ Նուբարաշեն վարչական շրջանի, քանի որ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներ առկա չեն) իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և կառուցապատողից գնված բնակարանների.

Գծապատկեր 2



Երևան քաղաքում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներ առավել մեծ քանակ գրանցվել է Արաբկիր վարչական շրջանում՝ 1,108 միավոր և առավել ցածր՝ Էրեբունի վարչական շրջանում՝ 27 միավոր:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ-ում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 1

Հանրապետություն	**Քանակ**
Երևան	2,214
Կոտայք	1,005
Արմավիր	130
Տավուշ	23
Շիրակ	14
Արարատ	132
Սյունիք	16
Արագածոտն	92
Գեղարքունիք	14
Վայոց Ձոր	0
Լոռի	0
Ընդամենը	3,640

ՀՀ-ում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 3,640 միավոր բազմաբնակարան բնակելի

շենքերի բնակարաններ, որից 2,214 միավորը գրանցել ենք Երևան քաղաքում, իսկ 1,426 միավորը՝ մարզերում:

Աղյուսակ 2-ում և Գծապատկեր 3-ում ներկայացված են 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ վարչական շրջանների.

Աղյուսակ 2

Երևան քաղաքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերից բնակարանների գնման իրավունքների քանակային տվյալները՝ ըստ վարչական շրջանների	
Վարչական շրջան	**Քանակ**
Կենտրոն	172
Արաբկիր	406
Քանաքեռ-Զեյթուն	112
Նոր-Նորք	337
Էրեբունի	9
Շենգավիթ	31
Դավթաշեն	143
Աջափնյակ	325
Մալաթիա-Սեբաստիա	378
Ավան	203
Նուբարաշեն	0
Նորք-Մարաշ	98
Ընդամենը	2,214

Գծապատկեր 3



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի գնման իրավունքով առավել մեծ քանակ գրանցվել է Արաբկիր վարչական շրջանում՝ 406 միավոր, իսկ առավել ցածրը՝ Էրեբունի վարչական շրջանում՝ 9 միավոր:

Աղյուսակ 3-ում և Գծապատկեր 4-ում ներկայացված են 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ մակերեսների.

Աղյուսակ 3

Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերից գնման իրավունքով ձեռք բերված բնակարանների քանակային տվյալներն՝ ըստ մակերեսների					
Վարչական շրջան	25-50 **քմ**	50-75 **քմ**	75-100 **քմ**	100-200 **քմ**	200 **քմ և ավելի**
Կենտրոն	19	76	43	27	7
Արաբկիր	55	178	122	50	1
Քանաքեռ-Զեյթուն	1	50	31	25	5
Նոր-Նորք	38	154	117	28	0
Էրեբունի		4	5		
Շենգավիթ	3	12	12	4	
Դավթաշեն	7	55	37	43	1
Աջափնյակ	8	208	94	15	
Մալաթիա-Սեբաստիա	32	190	117	37	2
Ավան	26	89	64	23	1
Նուբարաշեն	0	0	0	0	0
Նորք-Մարաշ	4	38	18	35	3
Ընդամենը	193	1,054	660	287	20



Գծապատկեր 5-ում ներկայացված են 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում գրանցված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներն՝ ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքի գրեթե բոլոր վարչական շրջաններում կատարվող մեծածավալ շինարարական աշխատանքների արդյունքում ստեղծվել են բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրներ և թաղամասեր: Մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում առանձնացվել է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի գործարքների տեսանկյունից առավել ակտիվ վարչական շրջանները:

Կենտրոն-909
Աջափնյակ- 587
Ավան-247
Արաբկիր-1,108
Էրեբունի-27
Դավթաշեն-102
Մալաթիա-Սեբաստիա-478
Նոր-Նորք-173
Նորք-Մարաշ-154
Շենգավիթ-124
Քանաքեռ-Զեյթուն-179
Նուբարաշեն-0

Կենտրոն վարչական շրջան

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 909 միավոր առուվաճառքի գործարք, որից 811 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 6-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 6



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանի՝ Արշակունյաց 18/4, Գ. Ջահուկյան փողոց 69, Արգիշտի 11/14, 11/11, Արամի 86 Խանջյան փողոց 9/3, Գ. Էմին 23, 25, Բյուզանդ 45/2, Լ. Ազգալդյան փողոց 2/1, Ռոստոմի փողոց, Հ. Բաղալյան փողոց 4 Գ. Գասպարյան 5, 9/1, այլ առավել ակտիվ փողոցներում գրանցված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 420,100-2,163,700 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում (Արգիշտիի փողոց 11/15, Գ. Էմինի փողոց 6, Գ. Գասպարյան փողոց 5/6, Մ. Աբեղյան փողոց 19/1, Պարոնյան փողոց 21/11, Վ. Անտառային փողոց 7/1, Տերյան փողոց 107, Ֆիրդուսի փողոց 2, Արշակունյաց 18/4, Տ. Մեծի պողոտա 1/2,) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 172 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 400,000 – 2,889.800 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 2,889.800 ՀՀ դրամ գրանցվել է Տ. Մեծի, իսկ նվազագույնը՝ 400,000 ՀՀ դրամ Արշակունյաց պողոտաներում:

Արաբկիր վարչական շրջան



Արաբկիր վարչական շրջանում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1,108 միավոր առուվաճառքի գործարք, որից 1,007 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 7-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արաբկիր վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 7



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում է Արաբկիր վարչական շրջանի՝ Ա. Գրիբոյեդովի փողոց 17, Աղբյուր Սերոբի 52/6, 52/12, Գ. Ղափանցյան 3, Կոմիտասի պողոտա 59/12, Մամիկոնյանց փողոց 45/1, Վ. Դավթյան փողոց 1/4, Ն. Ադոնցի փողոց 19/8, Վ. Համբարձումյան 113, և այլ փողոցների ու թաղամասերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատնվում են 341,700-1,178,300 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արաբկիր վարչական շրջանում (Ա. Գրիբոյեդովի փողոց 48, Հ. Արղության փողոց 10/15, Արաբկիր 51-րդ փողոց 11, Լեռ Ն. Տիգրանյան փողոց 1-ին փակուղի 1, Այգեկցու փողոց Ն. Ադոնցի փողոց 19/4, Հ. Էմինի փողոց 1-ին նրբանցք Վրացական փողոց 16/3, Ս. Գրիգորյան փողոց 21, Ազատության պողոտա 1/43 և այլն) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 406 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 340.000 – 2,537,800 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 2,537,800 ՀՀ դրամ գրանցվել է Ազատության պողոտայում, իսկ նվազագույնը՝ 340,000 ՀՀ դրամ Ն. Ադոնց փողոցում:

Դավթաշեն վարչական շրջան



Դավթաշեն վարչական շրջանում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 102 միավոր առուվաճառքի գործարք, որից 76 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 8-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 8



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանի՝ Սասնա Ծռերի փողոց 3, Ա. Միկոյան 64, Դավթաշեն 2-րդ թաղամաս 22/2, և այլ փողոցների ու թաղամասերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են են 323,000-1,056,100 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանում (Տ. Պետրոսյան փողոց, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 4/17, Անաստաս Միկոյան փողոց 31, Փիրումյանների փողոց 7/6 և այլն) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 143 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները են 366,900 – 705,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 705,000 ՀՀ դրամ գրանցվել է Տ. Պետրոսյան փողոցում, իսկ նվազագույնը՝ 366,900 ՀՀ դրամ Դավթաշեն 1-ին թաղամասում:

Աջափնյակ վարչական շրջան

Աջափնյակ վարչական շրջանում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 587 միավոր առուվաճառքի գործարք, որից 530 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 9-ում ներկայացված 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 9



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանի՝ Նազարբեկյան թաղամաս 41/1, 12/4, Գ. Հասրաթյան 15, Հալաբյան 75/1, Աբելյան 2/1, Հ. Շիրազի փողոց 2/9, և այլ թաղամասերի ու փողոցների նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 286,100-858,300 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանում (Թ. Նազարբեկյան թաղամաս, Պ. Տիչինայի փողոց 320/55, Հ. Շիրազի փողոց 2, Դեֆանս Հաուզինգ թաղամաս 67, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 325 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 347,400 – 650,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 650,000 ՀՀ դրամ գրանցվել է Նազարբեկյան թաղամասում, իսկ նվազագույնը՝ 347,400 ՀՀ դրամ Հ. Շիրազի փողոցում:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 478 միավոր առուվաճառքի գործարք, որից 427 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 10-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 10



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ Կուրղինյան փողոց 2/6, Մ. Մելքոնյան 10, 46, 46/1, 52, Լենինգրադյան 23/2, 29/14, Սեբաստիայի փողոց 3/3 և այլ թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 248,900-976,250 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում (Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոց, Ծովակալ Իսակովի պողոտա 12/11, Լենինգրադյան փողոց 19/12, Ա. Բաբաջանյան փողոց 42/5, Ջ. Անդրանիկի փողոց 121/6 Ռաֆֆու փողոց 28, Մ. Մելքոնյան փողոց 24 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 378 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 247,230– 950,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 950,000ՀՀ դրամ գրանցվել է Լենինգրադյան փողոց , իսկ նվազագույնը՝ 247,230 ՀՀ դրամ Իսակովի պողոտայում:

Նոր Նորք վարչական շրջան



Նոր Նորք վարչական շրջանում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 173 միավոր առուվաճառքի գործարք, որից 164 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 11-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 11



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում Լվովյան 26, Մոլդովական 49/40, 49/74, Մինսկի փողոց 21-23, Գյուրջյան 11/4 և այլ առավել ակտիվ փողոցներում գրանցված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 308,200-679,400 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում (Ա. Միկոյան փողոց 9/3, Լվովյան փողոց 2/1, Ֆ. Նանսենի փողոց 24, Հ. Գյուրջյան փողոց 14/1 Նոր Նորք Ա. Հովհաննիսյան փողոց 21, Երևան, Նոր Նորք Մոլդովական փողոց 12/2 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 337 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 261,360 – 675,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 675,000 ՀՀ դրամ գրանցվել է Լվովյան փողոցում, իսկ նվազագույնը՝ 261,360 ՀՀ դրամ Հ. Մոլդովական փողոց:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 179 միավոր առուվաճառքի գործարք, որից 144 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 12-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի՝ Կ. Ուլնեցու 58/20, Դ. Անհաղթ 11/12, 14/4, Պ. Սևակ 5/3, և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 341,800-1,170,470 ՀՀ դրամի սահմաններում :

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում (Ա. Ահարոնյան փողոց 2, Դ. Անհաղթի փողոց 6, Դրոյի փողոց 13/1, 22, Ջ. Քանաքեռցու փողոց 137/1, Կ. ՈՒլնեցու փողոց 32/22, Պ. Սևակի փողոց 1/7 շենք, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 112 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 247,500 – 870,650 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 870,650 ՀՀ դրամ գրանցվել է Կ. ՈՒլնեցու, իսկ նվազագույնը՝ 247,500 ՀՀ դրամ Պ. Սևակի փողոցներում:

Շենգավիթ վարչական շրջան

Շենգավիթ վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 124 միավոր առուվաճառքի գործարք, որից 113 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 13-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 13



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանի՝ Մ. Ֆրունզեի փողոց 8/9, Չեխովի 39/2, 47, Գ. Նժդեհ 23/3, Հ. Հովսեփյան 12/1, և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բնակելի շենքերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 321,150-861,200 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում (Սևանի փողոց 21/4, Ա. Մանթաշյան փողոց 44, Արշակունյաց 27/3, Գ. Նժդեհի փողոց 15/1, Մ. Ֆրունզեի փողոց 10/4, Հ. Հովսեփյան փողոց 31) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 31 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 500,000 – 702,200 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գին՝ 702,200 ՀՀ դրամ գրանցվել է Արշակունյաց, իսկ նվազագույնը՝ 500,000 ՀՀ դրամ Ա. Մանթաշյան փողոցներում:

Ավան վարչական շրջան



Ավան վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 247 միավոր առուվաճառքի գործարք, որից 238 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 14-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 14



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանի՝ Աճառյան փողոց 37/22, 37/327 Ալմա-Աթայի 5, Մ. Խուդյակովի 1/8, Ռուբինյանց 27/95 և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 230,460-783,100 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանում (Ալմա-Աթայի փողոց 1/4, Ավան-Առինջ թաղամաս 1-ին միկրոշրջան, Հ. Աճառյան փողոց 35/19, 37/1, 53, Աշխաբադի փողոց 9/2, Ջ. Սարկավագի փողոց 128, Ռուբինյանց փողոց 27/78, Աճառյան փողոց 42/5, Թումանյան թաղամաս 46/2, Ծարավ աղբյուրի փողոց 134/4) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 203 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 299,400– 880,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 880,000 ՀՀ դրամ գրանցվել է Աճառյան, իսկ նվազագույնը՝ 299,400 ՀՀ դրամ Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանում:

Նորք-Մարաշ վարչական շրջան

Նորք-Մարաշ վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 154 միավոր առուվաճառքի գործարք, որից 149 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 15-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 15



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանի՝ Գ. Հովսեփյան փողոց 56/9, Գ. Ջահուկյան փողոց 213/9, Նորքի փողոց 1-ին նրբանցք 19/5 և փողոցների առավել ակտիվ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 328,290-914,210 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանում (Նորքի այգիների փողոց 180, Ա. Ուրարտուի փողոց 82/5, Ա. Արմենակյան փողոց 108/7, Գ. Հովսեփյան փողոց 24/9, 6/9, 8/1, 46/7, 46/10, Է. Իսաբեկյան փողոց 1/2,) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 98 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 324,670 – 1,699,350 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում և առավելագույն և նվազագույնը 1 քմ գինը գրանցվել է Գ. Հովսեփյան փողոցում (Գ. Հովսեփյան փողոց 6/9 Գ. Հովսեփյան փողոց 46/10):

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Մեր կողմից դիտարկվել է նաև մարզերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների գնային և քանակական վերլուծություն, ըստ որի իր ակտիվությամբ առանձնացել է Կոտայքի մարզը: Ստորև ներկայացնում ենք 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված վերլուծությունների արդյունքները :

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում իրականացվել է նորակառույց (մինչև 9 տարի մաշվածություն ունեցող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 327 գործարք, վերոնշյալ գործաքներից 290 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից (գծապատկեր 1) :

Գծապատկեր 16-ում Կոտայքի մարզում նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործաքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 16



Գծապատկեր 17-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում՝ ըստ ակտիվ քաղաքների և գյուղական բնակավայրերի իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ նորակառույց և կառուցապատողից գնված բնակարանների.

Գծապատկեր 17



Աղյուսակ 4-ում ներկայացված է Կոտայքի մարզում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ ակտիվ քաղաքների և գյուղական բնակավայրերի.

Աղյուսակ 4

Կոտայքի մարզ	2025 թվականի առաջին կիսամյակ
Աբովյան	152
Ծաղկաձոր	147
Նոր Հաճն	30
Հրազդան	17
Եղվարդ	4
Առինջ	377
Ջովունի	81
Նոր Գեղի	8
Նոր Գյուղ	42
Պոռշյան	3
Ձրվեժ	64
Քանաքեռավան	47
Քասախ	20
Ձորաղբյուր	10
Գողթ	3
Ընդամենը	1,005

Կոտայքի մարզում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 1,005 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որից 350 միավորը գրանցվել է քաղաքներում, իսկ 655 միավորը՝ գյուղական բնակավայրերում:

Գծապատկեր 18-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք բերված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների քանակական բաշխվածությունն՝ ըստ քաղաքների և գյուղական համայնքների.

Գծապատկեր 18



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում անշարժ գույքի գնման իրավունքով առավել բարձր քանակ գրանցվել է Առինջ գյուղական համայնքում՝ 377 միավոր, իսկ առավել ցածր՝ Գողթ գյուղական բնակավայրում՝ 3 միավոր:

Ծաղկաձոր քաղաք

Ծաղկաձոր քաղաքում 2025 թվականի առաջին կիսամյակի գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 20 միավոր առուվաճառքի գործարք, որից 2 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 19-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 19



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքի Անտառային 1-ին թաղամաս և Խ. Մուրադյան փողոցում նորակառույց բնակելի շենքերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 151,300-571,400 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքում (Գ. Մագիստրոսի 6, Գլխավոր մարզահամալիր թաղամաս 81, Մ. Մկրտչյան փողոց 17, Վ. Հարությունյան Սարալանջի փողոց 1-ին փակուղի 1, 1/69, Ծաղկունյաց հրապարակ 5, Խ. Մուրադյան փողոց 3/1, Պահլավունյաց փողոց 73,) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 147 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 245,000 – 1,220,400 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 1,220,400 ՀՀ դրամ գրանցվել է Սարալանջի, իսկ նվազագույնը՝ 245,000 ՀՀ դրամ Պահլավունյաց փողոցներում:

Առինջ գյուղական բնակավայր

Առինջ գյուղական բնակավայրում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 66 միավոր առուվաճառքի գործարք, որից 60 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 20-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 20



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում (Պ. Սևակի թաղամասի 17 փ., Վ. Տերյան 1-ին փողոց, Դուրյան 1-ին փողոց, Կ. Հովագիմյան և այլ փողոցներ) նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 230,350-871,200 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում (Տերյան թաղամասի 1-ին փողոց, Պ. Սևակի թաղամասի 4-րդ, 20-րդ փողոց 2-րդ փակուղի, Խ. Աբովյան թաղամասի 7-րդ 8-րդ փողոցներ, Բ թաղամասի 4-րդ փողոց, Կ. Հովագիմյան 32/2,Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին, 17-րդ փողոցներ, Մարշալ Բաբաջանյան թաղամասի 1-ին փողոց, Պ. Դուրյան թաղամասի 2-րդ փողոց և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 377 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 258,000 – 593,150 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 593,150 ՀՀ դրամ գրանցվել է Պ. Սևակի թաղամասի 4-րդ փողոցում, իսկ նվազագույնը՝ 258,000 ՀՀ դրամ, Պ. Սևակի թաղամասի 20-րդ փողոի 2-րդ փակուղիում:

Զովունի գյուղական բնակավայր

Զովունի գյուղական բնակավայրում 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 239 միավոր առուվաճառքի գործարք, որից 226 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 21-ում ներկայացված է 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Զովունի գյուղական բնակավայրում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 21



2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Զովունի գյուղական բնակավայրում (6-րդ փողոց, 30-րդ փողոց 2-րդ նրբանցք) նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 254,500-509,600 ՀՀ դրամի սահմաններում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Զովունի գյուղական բնակավայրում (Զովունի 30-րդ փողոց 2-րդ նրբանցք, Զովունի 6-րդ փողոց, Զովունի 41-րդ փողոց) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 81 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 238,600 – 589,900 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 589,900 ՀՀ դրամ գրանցվել է Զովունի 30-րդ փողոցի 2-րդ նրբանցքում, իսկ նվազագույնը՝ 238,600 ՀՀ դրամ, Զովունի 6-րդ փողոցում:

Կադասկրի
կոմիտե